

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ—ԳՆՆԱԳԱՏԱԿԱՆ

Le Parler arménien d'Akn, p. M. Maxudianz, vardapet d'Etchmiadzin, Paris 1912. Ակնայ հայոց բարբառը, Մ. Վ. Մաքսուդեանի. Պարիզ. 1912.

Եւրոպայի համալսարանները հայ ուսանողները մի գովելի սովորութեամբ դոկտորական աստիճան ստանալու համար պատրաստած իրենց շարագրութիւնները նիւթը յաճախ ընարում են հայոց պատմութիւնից և լեզուից: Գրանով նրանք մեաժամանակ և երկու ուրիշ նպատակի են ծառայած լինում. մի կողմից՝ եւրոպական լեզուներով գրուած այդ շարագրութիւններով նրանք ծանօթացնում են եւրոպացի գիտնականներին հայոց պատմութիւնն ու գրականութիւնը, և միւս կողմից՝ որ գլխաւորն է՝ նրանք գիտական մեթոդով մշակում են հայագիտական նիւթերը, որովհետեւ այդ գրուածքները, ինչքան էլ ուսանողական շարագրութիւններ են, ընդունուելով մասնագէտ պրոֆեսորներէց՝ զերծ են լինում շատ պակասութիւններից և աւելի կամ պակաս չափով հանդանակում են հայագիտական ուսումնասիրութեանը:

Այդպիսի շարագրութիւններից մէկն է և վերևում գրուածը՝ «Ակնայ հայոց բարբառը», որ Եջմիածնի միաբան հ. Մեսրոպ վարդապետ Մաքսուդեանը ուսումնասիրել է Պարիզի համալսարանի դոկտորութեան աստիճան ստանալու համար: Եւրոպացի շարագրութիւնը հաւանութիւն է դառած յայտնի հայագէտ Մէյէից, որի մօտ և հ. Մաքսուդեանը ուսել է համեմատական քերականութիւնը հին հայերէնի, սլաւոներէնի, յունարէնի և հին ու միջին իրաներէնի: Բացի այդ՝ հ. Մաքսուդեանը լսել է նաև ուրիշ պրոֆեսորների Պարիզում և Գերմանիայում, պարապելով յատկապէս հնդեւրոպական լեզուաբանութեամբ, սովորելով սանսկրիտ, գոթերէն ու լիթաւերէն, ինչպէս նաև երբայեցերէն:

Այս աշխատութեան սկզբում, ինչպէս պահանջուում է, գրուած են այն գրաւոր աղբիւրները, որոնցից օգտուած է հեղինակը. դրանք մեր լեզուի և բարբառների քերականութիւններ և ուսուածքներ են: Բացի այդ՝ նա օգտուել է նաև իր անձնական ծանօթութիւնից. լինելով ակնեցի, թէպէտ և մա-

նուկ հասակից դուրս եկած իր հայրենի քաղաքից, պահել է յիշողութիւն Ակնայ բարբառի: Բայց այդքանը քիչ է մի բարբառ հետազօտելու համար. պէտք էր լինել տեղու՞մ և լսել մարդկանց կենդանի խօսքն ու արտասանութիւնը: Այդ թերին լրացրել է հ. Մաքսուդեանը նրանով, որ կարողացել է Պարիզում լսել Ակնայ բարբառը 65 տարեկան մի ակնեցի կնոջից, որ Ակնից դուրս եկած է եղել մի քանի տարուց ի վեր: Բացի դրանից նա լսել է նաև Լիճքի (գիւղ Ակնայ շրջակայքում), Կամարիապի, Մարցուանի և այլ բարբառներով խօսող մի քանի պարոններին:

Ակնայ բարբառով նիւթեր հրատարակել է առաջին անգամ Գարեգին վ. Սրուանձտեանն իր «Համով Հոտով» ժողովածուի մէջ. դրանք մի քանի հեքաթ և ժողովրդական երգեր են: Ապա յայտնի է Հ. ձանիկեանի նշանաւոր աշխատանքը «Հնութիւնք Ակնայ», որ հարուստ նիւթեր է պարունակում Ակնայ աղագրութեան և Ֆոկլորէի մասին: Սրուանձտեանն ու ձանիկեանը, չլինելով ոչ լեզուաբան և ոչ իսկ բանասէր, չէին կարող անշուշտ լեզուաբանօրէն դիտական նշանակութիւն ունեցող ճիշտ աշխատանքներ կատարել. նոյնպիսի գնահատութեան է ենթարկում հեղինակը և «Քիւրակին» մէջ Կ. Պոլսում 1898 և 1900 թուականներին հրատարակած հեքաթները հ. Տրդատ Պալեանի, Լինչպէս և Հանդէս Ամսօրեայի» մէջ դեռ շարունակուող յօդուածը՝ «Ակնայ դաւառաբարբառը» Մ. Ս. Գաբրիէլեանի: Ակնայ բարբառին նուիրել են սակաւ տողեր նաև Կարոտն' իր «Կիլիկիայի հայերէնի պատմական քերականութեան» մէջ և Աճառեանն՝ իր «Հայ բարբառների դասաւորումն» աշխատանքի մէջ. բայց դրանց լեզուաբանական աշխատանքը նպատակ չէ ունեցել առանձնապէս Ակնայ բարբառը հետազօտելու: Հ. Մաքսուդեան իր գործով գ'ալիւն է այդ պահիսը լրացնելու: Բայց նա էլ այդ բարբառն ամբողջապէս չի հետազօտում. Ակն քաղաքը բաժանւում է վերին և ներքին թաղերի, որոնց խօսուածքները միմեանցից զանազանւում են առանձնայատկութիւններով. հ. Մաքսուդեանը առնում է միայն ներքին թաղինը, որտեղից է և ինքը: Քաղաքի բարբառից տարբերւում են նաև շրջակայ գիւղերի խօսուածքները, որոնցից մի քանիսի առանձնութիւնները բերուած են այս հետազօտութեան մէջ:

Ակնեցիք ըստ տեղական աւանդութեան գաղթած են Վանից 11-րդ դարու առաջին քառորդում. բայց Վանի և Ակնի բարբառները խիստ տարբերւում են միմեանցից. մի ուրիշ աւանդութեամբ նրանք գաղթած են Անի քաղաքից: Այդ պիտի ցոյց տայ Ակնի և իր շրջակայ գիւղերի, Լինչպէս և Անի քաղա-

քննող զաղթականների բարբառների ուսումնասիրութիւնը, սրբովհետեւ ինչպէս ասել է Մէյէն. «արդի հայերէնի բարբառներն ինչպիսիք ամենից առաջ հայ զաղթականութիւնների ինչպիսիք է»: Ահնայ բարբառին ամենից մօտ են Կարնոյ (հետն առած նաև Կարսի, Ալեքսանդրապոլի, Ախալքալաքի ու Ախալցխայի, որոնք զաղթած են Կարինից), Խարբերդի ու Երզնկայի, Շարին-Կարաբահիսարի և Ահաճայոց (հետն առած և Սուշաւայի) բարբառները:

Հ. Մարտուզեանի բուն աշխատանքը բարբառի հետազոտութեան մասին բաժանուած է երկու մասի՝ հնչաբանութիւն (եր. 12—63) և ձևաբանութիւն (եր. 64—102). բայց այդ նաև թուրքերէնից փոխառած բառեր (եր. 103—137): Վերջում մի յաւելուած ծանօթութիւն Ահնայ վերին թաղի բարբառի մասին:

Հնչաբանութեան մէջ մի առ մի բարեխղճօրէն նկարագրուած են, գրաբարի համեմատութեամբ, Ահնայ բարբառի հնչիւնահան երևոյթները, որոնք մասամբ յատուկ են նաև ուրիշ բարբառներին. այս մասը և կազմում է աշխատանքի դիւստոր կողմը. իսկ ձևաբանութեան մէջ Ահնայ բարբառին հանդիպադրուած են արևմտեան աշխարհաբարի հոլովական ձևերը, իսկ գերանունների համար, ինչպէս նաև խոնարհման, այլ և գրաբարի ձևերը: Թէ որքան լիակատար է այս խնամքով պատրաստուած աշխատանքը, այդ դժուար է ասել առանց մասնաւորապէս այդ նիւթով պարապած լինելու. միայն խոնարհման մէջ չկան յիշուած ապառնի անցեալն և ըղձական (ստորադասական) անցեալը՝ պիտի լինէի, պիտի սիրէի, լինէի, սիրէի ևլն: Արդեօք այդ բարբառի մէջ չկան այդ ձևերը, որ կասկածելի է, թէ՞ մոռացութեան են տրուած: Եթէ յիշուած է ներկայի ձևը լընիմ, լընիս ևլն (եր. 85), և թէ «Ստորադասական ներկային փոխանակել է սահմանականն առանց կու մասնիկի» (եր. 87), պէտք էր յիշել նոյնպէս, որ գրաբարի անցեալ անկատարն ևս, առանց կու մասնիկի, ստացել է ստորադասական անցեալի նշանակութիւն:

Երես 35, իւ երկբարբառի համար գրուած է օրինակ գրաբար արիւն, նեղուրիւն. դրանք նոր գրութեան ձևեր են, հինն է՝ առիւն, նեղուրբեւն, ինչպէս երևում է ձեռագիրներէց. ուստի և այդ կարգը պէտք էր դնել եր. 34, ալբեր, եղջեր, ալբեր բառերից յետոյ իբրև նոր կարգ եւ երկբարբառի փոփոխութեան:

Հեղինակն, ինչպէս որ պէտք էր այսպիսի գործի մէջ, աշխատել է միայն իր հետազօտած բարբառի նկարագիրը անել. բայց երբեմն, աւելի ծանօթութիւնների մէջ, տալիս է նաև նկարագրած երևոյթների բացատրութիւնները: Այսպէս օրի-

նակ ժամանակի անուճները հոլովման լան վերջը (օրւան, ամուան) բացատրում է մի հին—*ուն վերջացած ուղղականով, որն և համարում է իսկապէս սեռական հոլով՝ վրան աւելացած և յօդը (եր. 69): Գժուար է համաձայնել այս բացատրութեանը. ամուան, շաբաթւան, երեկւան ևլն ձևերը ծագած են, ինչպէս պէտք է կարծել, հին ամսեան, շաբաթեան, երեկեան ձևերից, ճիշտ նոյն հնչափոխութեամբ, որով և Ահնայ բարբառի մէջ հին ուսեաց ձևը դարձել է ուսւաց (եր. 77), ինչպէս և իշեան նմանները բարբառների մէջ դառնում են՝ իշւան(ք), տեղւան(ք):¹⁾—Մի ծանօթութեան մէջ (եր. 12) գրաբար ընչեղ (հարուստ) բառը նոյնացրած է Ահնայ բարբառի ինչեխ (ինչպէս, ինչկերպ) բառի հետ. այդ նոյնացումը արտաքին պատահականութիւն է միայն. գրաբարի ընչեղ բառը կազմուած է ինչ բառից եղ ածանցով, ինչպէս ուժեղ, զօրեղ, համեղ. իսկ Ահնայ ինչեխ հարցականը, որ ուրիշ բարբառների մէջ երևում է ինչըն, ինչրդ ձևով, կազմուած է ինչ-ցեղ. (=ինչպէս, ինչկերպ) բառերի կցումից:

Վերջապէս սխալ է ասել, թէ «ն կամ ր յօդի գործածութիւնը չկայ Վանեցւոց մէջ» (եր. 9): Այս բարբառում չկայ միայն ր յօդի գործածութիւնը. իսկ և յօդը գործ է ածւում ճիշտ ինչպէս և միւս բարբառներում: Ը յօդի դուրս ընկնելը Վանայ բարբառից միայն մի հնչաբանական երևոյթ է: Ինչպէս որ հին գառն, մուկն, եօրն ևլն բառերը, արտասանուելով գառն, մուկն, եօրն, դարձել են շեշտի ազդեցութեամբ նախ՝ գառր, մուկր, եօրր (ինչպէս գործ են ածւում այդ բառերը որոշ բարբառներում), և ապա վերջի ր ձայնաւորներն ևս դուրս է ընկել, և այդ բառերը դարձել են՝ գառ, մուկ, եօր,—ճիշտ նոյն փոփոխութեան է ենթարկուել և և յօդը, որ բաղաձայնից յետոյ և խօսքի վերջում, կամ խօսքի մէջ ամեն գաղափար ու բաղաձայնից առաջ դարձել է ր. մինչդեռ ձայնաւորից յետոյ և ձայնաւորից առաջ (եթէ երկու բառի մէջ դադար չի մտնում) մնում է և. մարդն, որդին, բայց՝ մարդր, գնաց, մարդր: Վանայ բարբառի մէջ սակայն այս հնչաբանական երևոյթն աւելի զարգացած է. այնտեղ և(=րն) յօդի այս մնացորդը ր ձայնաւորն ևս դուրս է ընկել, ինչպէս դառ, մուկ և նման բառերի վերջի ըն մասը. ձայնաւորով վերջացած բառերի վրայ սակայն, ինչպէս և ձայնաւորով սկսուող բառերից առաջ, (եթէ երկու բառի մէջ դադար չի մտնում), Վա-

1) Տես այս մասին՝ իմ «Ելիսարհաբարի հոլովները»:

նեցին էլ դեռ պահում է ն յօդը: Այսպիսով ամեն վանեցու համար շատ հեշտ է ր յօդի ճիշտ գործածութիւնը սովորել, բաւական է միայն բազմաձայնով վերջացած անուան տեղ դնել մի ձայնաւորով վերջացած անուն, որի վրայ ն յօդն է գրուում, և իսկոյն կիմանայ վանեցին, թէ արդեօք ր յօդը պէ՞տք է դնել թէ ոչ. որովհետև այդ բարբառի մէջ աւելում է՝ մեր քաղաք, բայց՝ մեր իդին (այդին), մեր եկեղեցին: Բայց վանեցի գրագէտներն անգամ այդ ր յօդի գործածութեանը չեն վարժուում. մէկ՝ նրա համար որ ուշադրութիւն չեն դարձնում դրա վրայ. մէկ էլ՝ որ պահում են իրենց բարբառային արտասանութիւնը. իսկ ր յօդը գուրս է ընկել այդ բարբառից հէնց միայն այդ տեղական որոշ արտասանութեան տղպեցութեան տակ: —

Մ. Աբեղեան.

Յ. Տէր Միրաբեան. Մերոզական գործնական ցուցման ցեղեր 20 կ. Հրատարակութիւն Վաստանի և Եմբրէթի Հայոց թեմական իշխանութեան:

Հեղինակին իր բարգմանեայ փորձառութիւնը ցոյց է տուել, որ դասատուները խիստ հակուած են լինում դարձեալ ու դարձեալ աւանդական մեթոդներին վերադառնալ: Հայ ուսուցչութեանը նորագոյն մեթոդների հետ ծանօթացնելու համար է աշխարհ կիել գործնական ցուցմանը ներքին» այս գրքով:

Հեղինակը լաւագոյն և ոչ աւանդական մեթոդներից ամենագլխաւորն է համարում «ձեական աստիճաններին»: Այս մասին հետևեալն է գրում. «Թեմումս աւած փորձնական դասերի քննադատութեան ժողովներին նախագահելով՝ տեսել եմ՝ այս աստիճաններին անունները տրուում են թէ ոչ՝ միշտ բազմակողմանի և խոր քննադատութիւնից, բնական անհրաժեշտութեամբ, միմեանց ետևից բղխում են այդ աստիճանները»: Մի բան շատ հետաքրքիր կլինէր պարզել, արդեօք այդ աստիճանները բղխում են, թէ բղխեցուում են, նրանք բնական, թէ «պաշտօնական» անհրաժեշտութիւններ են: Այս երկու դէպքումն էլ կարող են այդ աստիճանները «միմեանց ետևից բղխել», բայց տարբեր կլինէր ի հարկէ այդ «բղխումների» գնահատութիւնը:

Մի օրինակով պարզենք. թէ պ. Տէր Միրաբեանը ինչպէս է հայ ուսուցիչներին մանկավարժական նորագոյն մեթոդների հետ